ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 41Ա

19դեկտեմբերի2018թ

ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

Ավագանին որոշում է

Հաստատել ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1.2018թ.համայնքի բյուջեի կատարողականի հաղորդումը 19.12.2018թ-ի դրությամբ:

Զեկ.- Ս. Աբրահամյան

3. Բյուջեի հոդվածների փոփոխություն կատարելու մասին

Զեկ.- Ս. Աբրահամյան

3.Ոսկետափ համայնքում 2019թ տեղական տուրքերի և վճարների,դրույքաչափերի հաստատման մասին:

Զեկ.- Ս. Աբրահամյան

4.Ոսկետափ համայնքի ղեկավարի 2019թ վարձատրության չափի,համայնքապետարանի աշխատակազմի և մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակի ,հաստիքացուցակի և պաշտոնական դրույքաչափերի հաստատման մասին:

Զեկ.- Ս. Աբրահամյան

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Մեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Աղաբեկիրոսյան Ալեքսան կողմ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 42-Ա

19 դեկտեմբերի 2018թ.

ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ 19.12.2018Թ-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի1-ին կետով.

Ավագանին որոշում է

Ընդունել ի գիտություն համայնքի 2018թ. բյուջեի եկամուտների կատարողականը 19.12.2018թ. դրությամբ հետևյալ կերպ՝

	Պլան	Փաստացի	Կատարողական %
Հողի հարկ	19350.0	18555.0	95.8
Գույքահարկ	12000.0	12503.0	104.1
Հողի վարձավճար	3450.0	3325.0	96.3
Տեղական տուրք	1138. 0	1216.0	106.8
Տեղական վճար, աղբահանութ.	4450.0	4126.0	90.8
Ծնողական գումար	2000.0	2148.0	107.4
Ընդամենը	42480.0	41873.0	98.5

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Սեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 43 -Ն

19 դեկտեմբերի 2018թ.

2018Թ. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և« Իրավական ակտերի մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածով

Ավագանին որոշում է

Կատարել համայնքի 2018թ.-ի բյուջեի հոդվածների հետևյալ փոփոխությունը՝

1. Բյուջեի ծախսային մասում սուբվենցիա ասֆալտ -բետոնյա ծածկի վերանորոգում /04.05.01.51/ ծրագրի 5113 հոդվածը ավելացնել 5877.6 հզ. դրամ ով
2. Պետական բյուջեից սուբվենցիա ասֆալտ- բետոնյա ծածկի վերանորոգման համար բյուջեի եկամտային մասը ավելացնել 5877.6 հզ. դրամ:

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Մեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 44-Ն

19դեկտեմբերի 2018թ.

ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>օրենքի 11-ից 14-րդ հոդվածներով

Ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոսկետափ համայնքում 2019թ-ի համար հաստատել հետևյալ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ըստ առանձին տեսակների համաձայն հավելվածի:

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Սեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված Արարատի մարզի
Ոսկետափ համայնքի ավագանու
2018թ. դեկտեմբերի 19-ի թիվ 44–Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Ոսկետափ համայնքում տեղական տուրքերի դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է

նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ,

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութը հազար դրամ,

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնը հազար դրամ,

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում չորս հազար դրամ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝վեց հազար դրամ,

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար դրամ,

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասնհինգ հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր յոթանասունհինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,
ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,
զ. վիճակախաղերի համար՝ յոթանասունհինգ հազար դրամ.
10) համայնքի վարչական տարածքում, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար վեց հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ.
բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ.
11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, միջպետական ու հանրապետական նշանակության յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար հազար դրամ,
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,
գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,
դ. այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 190դրամ,
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 75 դրամ:
12) Ոսկետափ համայնքի խորհրդանիշը՝ անվանում որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝երեսուն հազար դրամ.
13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու տաքսիների՝ ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ երեք հազար դրամ.
14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար մեկ հարյուր յոթանասուն հազար դրամ.
15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ ութ հարյուր հիսուն հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝մեկ միլիոն վեց հարյուր հազար դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար երկու միլիոն երեք հարյուր հազար դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Ոսկետափ համայնքում տեղական վճարների դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝երկու հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝երկու հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երկու հազար դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝երկու հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝երկու հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար հազար դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հարյուր հիսուն դրամ

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ հազար դրամ
- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ հազար դրամ:

8)Աղբահանության վճարի արտոնություն տալ 100տոկոսի չափով չորս և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին, վճարումը կատարել համայնքի բյուջեից:

9).Առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ համար քսան դրամ

ա.Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար ամսական՝ 1քմ- 4 դրամ

բ. կրթական, մշակույթային, առողջապահական, սպորտային շինություններ՝ ամսական 1քմ- 2 դրամ:

գ) համայնքի տարածքում աղբահանությունը իրականացնել շաբաթը մեկ անգամ:

10)) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար ,համայնքի բնակիչ յուրաքանչյուր երեխայի համար ամսական՝չորս հազար դրամ, իսկ սոցիալապես անապահով ընտանիքից հաճախող երկու և ավել երեխաներից յուրաքանչյուր երեխայի համար ամսական երեք հազար դրամ, այլ համայնքից հաճախող յուրաքանչյուր երեխայի համար հինգ հազար դրամ:

11) Համայնքի արխիվից փաստատթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար 1000 դրամ:

12) Համայնքի տարածքում անշարժ գույքի օբյեկտներին նոր հասցե տրամադրելու համար՝ հազար դրամ:

13)Անասնաբույժի ծառայություններից օգտվելու վճար ըստ ժամանակացույցի, փաստացի անասնագլխաքանակի հիման վրա, մեկ միավորի հաշվով 100 դրամ մեկ ամսվա համար:

ՈՍԿԵՏԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿԱՐԻՆԵ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 45-Ն

19դեկտեմբերի 2018թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019Թ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով, 32-րդ հոդվածի 1-ին կետով Հայաստանի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով.

Ավագանին որոշում է

Հաստատել 2019թ.-ի Ոսկետափ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի և մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը համաձայան 1,2 հավելվածների:

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Սեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 1

Ոսկետափ համայնքի ավագանու

19դեկտեմբերի 2018թ 45-Ն որոշման

ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019Թ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը՝ 19

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար		330 000
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	216000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար/1.2.1/	1	216000
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3.1/	1	202000
Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1.1/	1	125000
Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1.2/	1	125 000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2.1/	1	120 000
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3.1/	1	115 000

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ դրամ/
Հարկահավաք	1	115000
Ավագ օպերատոր	1	115000
Օպերատոր	1	105000
Գործավար	1	80000
Անասնաբույժ	1	80000

ՈՍԿԵՏԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԵԽՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Պարետ	1	115000
Պահակ	1	80000
Հավաքարար	1	90000

ՈՍԿԵՏԱՓԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

Մշակույթի տան վարիչ	1	85000
Գրադարանի վարիչ	1	85000
Գրադարանավարուհի	1	80000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 2

Ոսկետափ համայնքի ավագանու

19դեկտեմբերի 2018թ 45-Ն որոշման

Ոսկետափի Մանկապարտեզի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը՝ 29

Մ/Մանկապարտեզի տնօրեն	1	160000
Մեթոդիստ մանկավարժ	1	130000
Դաստիարակ	5.0	130000
Դաստիարակի օգնական	4.4	80000
Խոհարար	1.0	100000
Տնտեսվար	0.5	100000
Խոհարարի օգնական	1	100000
Մանկապարտեզի հաշվապահ	0.5	128000
Ֆիզ.դեկավար	0.5	100.000
Երաժշտության ուսուցչուհի	1	130000
Դերձակօժ. բանվոր	0.75	100000
Բուժքույր	0.75	100000
Դռնապան,այգեպան	1.0	100000
Լվացքարար	0.25	83000
Պահակ	1.5	90000
Հնոցապան	1.0	83000
Էլեկտրիկ	0.5	83.000
Հավաքարար	0.5	83.000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ